

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2018**  
**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ**  
**ՀԱՐՑԱՏՈՄՍ**  
**10 - րդ դասարան**

**I. ԹԵՍՏՍՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

**(17 միավոր)**

**1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»**

**(12 միավոր)**

**ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8-րդ առաջադրանքներ: (0,5 X 8 = 4 միավոր)**

**1. Ե՞րբ է հայերենն անջատվել հնդեվրոպական մայր լեզվից.**

1) Ք. ա. VI հազարամյակի սկզբին

3) Ք. ա. IV հազարամյակի վերջին

2) Ք. ա. VI հազարամյակի վերջին

4) Ք. ա. V հազարամյակի սկզբին

**2. Ե՞րբ է գահակալել Սարգսրի II-ը.**

1) Ք. ա. 764–735 թթ.

3) Ք. ա. մոտ 810–786 թթ.

2) Ք. ա. մոտ 825–810 թթ.

4) Ք. ա. 786–764 թթ.

**3. Մարաստանի, Բարեղունի և Հայաստանի դաշնակից զորքերը Ե՞րբ արշավեցին դեպի Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ.**

1) Ք. ա. 612 թ.

3) Ք. ա. 605 թ.

2) Ք. ա. 609 թ.

4) Ք. ա. 621 թ.

**4. Տիգրան Մեծը հռոմեացի ո՞ր զորավարի ուղարկած դեսպանին է տվել հետևյալ պատասխանը.**

*«Ես Միհրդատին չեմ հանձնի, իսկ եթե հռոմեացիները պատերազմ սկսեն, ապա... հակահարված կտամ նրանց»:*

1) Սուլլայի

3) Լուկուլլոսի

2) Պոմպեոսի

4) Կրասոսի

**5. Ի՞նչ էր անվանվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում.**

1) Արատտա

3) Արմինա

2) Ուրարտու

4) Հարմինույա

**6. Ո՞վ էր Վահանանց ապստամբության սկզբում մարզպան նշանակվել.**

1) Սմբատ Բագրատունին

3) Վահան Մամիկոնյանը

2) Սահակ Բագրատունին

4) Վասակ Մամիկոնյանը

**7. Ինչպե՞ս էր կոչվում Վարդանանց երդումը.**

1) «Հավատո հանգանակ»

3) «Վասն հայրենիքի»

2) «Հավատո ուխտ»

4) «Վարդանանց ուխտ»

**8. Ե՞րբ է Աշոտ Բագրատունին (Մսակեր) ճանաչվել հայոց իշխան.**

1) 850 թ.

2) 804 թ.

3) 855 թ.

4) 862 թ.

**բ. Լրացնել պատասխանը. (1 X 4 = 4 միավոր)**

**1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)**

- ա) Պարույր Նահապետի թագադրվելը և ճանաչվելը Հայաստանի թագավոր
- բ) կիմերների արշավանքները Վանի տերության դեմ
- գ) Տիգրան Երվանդյանի կողմից դաշնակից զորքերի հետ Բաբելոնի գրավումը
- դ) Կյուրոս II Մեծի զոհվելը
- ե) Կյուրոս Մեծի ապստամբությունը Մարաստանի դեմ

1	2	3	4	5

**2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)**

- ա) Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումը
- բ) Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությունը
- գ) Մեծ Հայքում Օրոնտես-Երվանդ III-ի գլխավորությամբ անկախության վերականգնումը
- դ) Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը
- ե) Սելևկյանների կարճատև գերիշխանության հաստատումը Մեծ Հայքի և հայկական մյուս թագավորությունների վրա

1	2	3	4	5

**3. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)**

- ա) «Յոթանասուն հովիտներ»-ի զիջումը Միհրդատ II-ին
- բ) հայկական զորքերի ներխուժումը Կապադովկիա՝ հայ-պոնտական դաշինքի համաձայն
- գ) Պոմպեոսի ժամանումը Արևելք
- դ) Պոնտոսի Ջելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերի հաղթանակը հռոմեացիների նկատմամբ
- ե) Արտավազդ II-ի և Կրասոսի հանդիպումը Ասորիքում

1	2	3	4	5

**4. Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը. (1 միավոր)**

- ա) Տաշիր-Ձորագետի թագավորության հիմնադրումը
- բ) Սյունիքի թագավորության հիմնադրումը
- գ) Տարոնի իշխանության միացումը Բյուզանդիային
- դ) Տրապիզոնի բանակցությունները Տայքի պատկանելության շուրջ
- ե) Աշոտ IV-ի մահը

**գ. *Լրացնել պատասխանը:* (1 X 4 = 4 միավոր)**

**1. Ստորև տրված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ: (0,5 X 2 = 1 միավոր)**

- 1) Ռուսա II-ի օրոք Ասորեստանի և Վանի համահայկական թագավորության միջև մղված պատերազմն ավարտվեց խաղաղության և բարեկամության պայմանագրի կնքմամբ:
- 2) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան և դադարեց Առաջավոր Ասիայում Վանի թագավորության համար վտանգ ներկայացնելուց:
- 3) Ք. ա. 743–713 թթ. մղված երեսնամյա պայքարի արդյունքում Վանի թագավորությանը թեև հաջողվեց վերականգնել իր դիրքերը, սակայն նա այլևս Առաջավոր Ասիայի հզոր տերություններից չէր:
- 4) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը կարողացավ գրավել Տուշպան և կրկին դարձավ Վանի թագավորության գլխավոր մրցակիցն Առաջավոր Ասիայում:
- 5) Ք. ա. 735 թ. դեպի Տուշպա արշավանքի արդյունքում Ասորեստանը չկարողացավ գրավել Տուշպան, սակայն վերականգնեց իր դիրքերը Առաջավոր Ասիայում:

--	--

**2. Ստորև թվարկված դրույթներից որո՞նք են ճիշտ:**

*(0,5 X 2 = 1 միավոր)*

***Տիգրանակերտի անկման պատճառով Տիգրան II-ը ընտրեց՝***

- 1) հանկարծակի հարձակումներով թշնամու ուժերը ջլատելու մարտավարությունը
- 2) պարթևների հետ հակահռոմեական դաշինք ստեղծելու մարտավարությունը
- 3) մինչև հիմնական ուժերի ժամանումը ժամանակ շահելու մարտավարությունը
- 4) թշնամուն երկրի խորքերը քշելու, նրան թիկունքից և մատակարարումից կտրելու մարտավարությունը
- 5) Հռոմի հետ բանակցելու և հաշտություն կնքելու մարտավարությունը

--	--

**3. Գտնել երկու սխալ պնդումները.**

*(0,5 X 2 = 1 միավոր)*

*Ի՞նչ նպատակներ էր հետապնդում պարթև արքա Վաղարշ I-ը՝ հարևան երկրներում գահ բարձրացնելով իր եղբայրներին.*

- 1) ստեղծել նոր աշխարհակալ տերություն
- 2) ստեղծել դաշնակից երկրների զինակցություն ընդդեմ Հռոմի
- 3) չեզոքացնել Հայաստանից մշտապես եկող վտանգը
- 4) վերջ տալ իր թագավորությունում գահակալական կռիվներին
- 5) վերականգնել Աքեմենյան տերության սահմանները

--	--

**4. Գտնել երկու սխալ պնդումները.**

*(0,5 X 2 = 1 միավոր)*

*Հայաստանի թուլանալը հետևանք էր Բյուզանդական կայսրության կողմից իրականացված հետևյալ միջոցառումների.*

- 1) Բյուզանդիային բռնակցված շրջանների հայ բնակչությունը և Հայոց եկեղեցին ենթարկվեցին ծանր հարկման:
- 2) Հարկերից ազատվեցին միայն Բյուզանդական կայսրության տարածքում գտնվող Հայոց եկեղեցու թեմերը:
- 3) Հայկական զորքերի մի մասն ուղարկվեց տերության խորքերը, մյուս մասն էլ ցիրուցան եղավ:
- 4) Հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ, և կայսրության արևմտյան շրջաններում նրանց տրվեցին ընդարձակ կալվածքներ:
- 5) Քաղկեդոնականություն ընդունած հայ իշխաններին շնորհվեցին բարձր տիտղոսներ, և կայսրության հյուսիսային շրջաններում տրվեցին ընդարձակ կալվածքներ, իսկ քաղկեդոնականություն չընդունած նախարարները զրկվեցին կալվածքներից և արտրվեցին Կիլիկիա:

--	--

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – ընտանիքային (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Պելոպոնեսյան պատերազմը:

- 1) Ք.ա. 500-449 թթ.
- 2) Ք.ա. 444-429 թթ.
- 3) Ք.ա. 431-404 թթ.
- 4) Ք.ա. 449-431 թթ.

2. Ո՞վ է «Գովք հիմարության» ստեղծագործության հեղինակը:

- 1) Ջովաննի Բոկաչչոն
- 2) Էրազմ Ռոտերդամցին
- 3) Թոմաս Մորը
- 4) Ալիգիերի Դանթեն

3. Ե՞րբ Ռուսաստանում հաստատվեց Ռոմանովների արքայատոհմը:

- 1) 1584 թ.
- 2) 1598 թ.
- 3) 1610 թ.
- 4) 1613 թ.

4. Երկրորդ աշխարհամարտի 1-ին փուլում Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև պատերազմը ստացավ հետևյալ անունը.

- 1) «Տարօրինակ պատերազմ»
- 2) «Չանձրալի պատերազմ»
- 3) «Խրամատային պատերազմ»
- 4) «Ծույլ պատերազմ»

բ. Լրացնել պատասխանը (1 X 2 = 2 միավոր)

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

(1 միավոր)

- ա) Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովը
- բ) Աբբասյանների խալիֆայության հաստատումը
- գ) Հռոմեական կայսրության բաժանումը Արևմտյան և Արևելյան մասերի
- դ) Մուհամեդի փախուստը (հիջրա) Մեքքայից Մեդինա
- ե) Քաղաքացիական իրավունքի հավաքածուի կազմումը Բյուզանդիայում
- զ) Կարլոս Մեծի թագադրումը արևմտահռոմեական կայսերական թագով

1	2	3	4	5	6

**2. Համապատասխանեցնել նշանավոր գործիչների անունները նրանց ծննդյան և մահվան տարեթվերի հետ: (1 միավոր)**

- 1) Թումաս Մոր
- 2) Նիկոլո Մաքիավելի
- 3) Նիկոլայոս Կոպերնիկոս
- 4) Գալիլեո Գալիլեյ
- 5) Լեոնարդո դա Վինչի
- 6) Միքելանջելո Բուոնարոտի

1	2	3	4	5	6

- ա) 1475–1564 թթ.
- բ) 1478–1535 թթ.
- գ) 1564-1642 թթ.
- դ) 1452–1519 թթ.
- ե) 1463–1527 թթ.
- զ) 1473–1543 թթ.

**գ. Լրացնել պատասխանը. (0,5 X 2 = 1 միավոր)**

**1. Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան: (0,5 X 2 = 1 միավոր)**

- 1) 1425 թ. մայաները կառուցեցին իրենց մայրաքաղաք Տենոչտիտլանը:
- 2) Մայաների պետությունը իր հզորության գագաթնակետին հասավ Մոնթեսումա 2-րդի (1502-1520 թթ.) գահակալման տարիներին:
- 3) 1519 թ. իսպանացի կոնկիստադոր Պիսարոն ափ իջավ Կենտրոնական Մեքսիկայում:
- 4) Իսպանացիները ացտեկների թշնամի մի քանի ցեղերի հետ միասին պաշարեցին ացտեկների մայրաքաղաքը և 1521 թ. գրավեցին այն:
- 5) Ինկերի պետությունը գտնվում էր ժամանակակից Պերուի, Բոլիվիայի, Չիլիի և Արգենտինայի լեռնային շրջաններում:
- 6) Ինկերի պետության մայրաքաղաքը Կուսկոն էր, որն ուներ շուրջ 500 հազար բնակչություն:

--	--

**II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (3 միավոր)**

**1. Ներկայացնել Բագրատունյաց Հայաստանի վերելքը.**

ա) Պետության բարգավաճումը,

բ) Անին մայրաքաղաք,

գ) Բագրատունյաց թագավորության հզորացումը 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին:

**Է. Մինասյան**  
**Պատմության հանձնաժողովի նախագահ,**  
**պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

11.04.2018թ.